

ԽՆԴԻՐԸ X-ի ՀԵՏ

Ես կարծում եմ, որ կարող եմ ենթադրել, որ այս տողերն ընթերցողներից տասը հոգուց յոթը, ինչ-որ խնդիր ունեն մեկ այլ մարդու հետ: Կամ աշխատավայրում, կամ տանը, կամ քո գործատուն, կամ քո աշխատողները, կամ նրանք, ովքեր ապրում են քո տանը, կամ նրանք, որոնց տանն ապրում ես դու, կամ քո խնամհները, կամ քո ծնողները, կամ քո երեխաները, կամ քո կինը, կամ քո ամուսինը քո կյանքն ավելի դժվարին են դարձում, քան կարիք կա՝ նույնիսկ այս օրերին: Կարելի է հուսալ, որ հաճախ չէ, որ այս դժվարությունների մասին (հատկապես՝ ընտանեկան) մենք պատմում ենք կողմնակի մարդանց: Բայց երբեմն պատմում ենք: Դրսից դիտող մի ընկեր հարցնում է մեզ, թե ինչո՞ւ այդքան տխուր տեսք ունենք, և ճշմարտությունն ի հայտ է գալիս:

Նման պահերին, դրսից դիտող ընկերը սովորաբար ասում է. «Բայց ինչո՞ւ չես ասում նրանց: Ինչո՞ւ չես գնում քո կնոջ (կամ ամուսնու, կամ հոր, կամ դստեր, կամ գործատուի, կամ տանտիրուհու, կամ վարձակալի) մոտ և ամեն ինչ դուրս հանում: Մարդիկ սովորաբար ողջամիտ են: Միակ բանը, որ պետք է անես այն է, որ ցույց տաս նրանց իրադրությունը ճիշտ լույսի ներքո: Բացատրի՛ր նրանց տրամաբանական, հանգիստ, ընկերական ձևով»: Եվ մենք, արտաքուստ ինչ էլ որ ասենք, ներքուստ տխուր մտածում ենք. «Ախր նա չի ճանաչում X-ին»: Մենք ճանաչում ենք: Մենք գիտենք, թե որքան անհույս է X-ին որևէ բան բացատրելը: Կամ մենք դա կրկին և կրկին փորձել ենք՝ փորձել ենք այնքան, մինչև զգվել ենք փորձելուց, կամ էլ երբեք չենք փորձել, որովհետև ի սկզբանե տեսել ենք, թե որքան անօգուտ կլինի: Մենք գիտենք, որ եթե փորձենք X-ի հետ «ամեն ինչ դուրս հանել», ապա կամ «տեսարան» կստեղծվի, կամ էլ X-ը ապշած կնայի մեզ և կասի. «Ես չգիտեմ, թե ընդհանրապես ի՞նչի մասին ես խոսում», կամ էլ (որը թերևս ամենից վատն է) X-ը միանգամայն կհամաձայնի մեզ հետ և կխոստանա նոր էջից սկսել և ամեն ինչ դնել նոր հիմքի վրա, և այնուհետև, քսանչորս ժամ անց կլինի ճիշտ այնպիսին, ինչպիսին X-ը միշտ եղել է:

Դու գիտես, իրականում, որ խնդիրները X-ի հետ քննարկելու ցանկացած փորձ նավարկելվելու է X-ի անձնավորության այն հին, աղետալի արատին: Եւ դու տեսնում ես, հետ նայելով, թե ինչպես են բոլոր ծրագրերը, որ դու կազմել ես, միշտ նավարկելվել այդ աղետալի արատին՝ X-ի անբուժելի նախանձին, կամ ծուլությանը, կամ զգայունությանը, կամ թանձրամտությանը, կամ հրամայողականությանը, կամ դուրազագրգռությանը, կամ փոփոխականությանը: Մինչև ինչ-որ մի տարիքի, դու միզուցե ունեիր այն պատրանքը, որ արտաքին մի բարեբախտություն՝ առողջության լավացում, աշխատավարձի բարձրացում, պատերազմի ավարտը, կլուծեր քո խնդիրը:

Բայց դու հիմա ավելի լավ ես հասկանում ամեն ինչ: Պատերազմն ավարտվել է, և դու գիտակցում ես, որ եթե նույնիսկ մնացած բաները կատարվեին, X-ը դեռ կլիներ X, և դու դեռ կբախվեիր նույն խնդրին: Նույնիսկ եթե դու դառնայիր միլիոնատեր, քո ամուսինը դեռ կմնար կովարար, կամ քո կինը դեռ կխոսեր քեզ վրա, կամ քո որդին դեռ կխմեր, կամ քո գոքանչը դեռ կապրեր քեզ հետ:

Մեծ քայլ առաջ է գիտակցել, որ դա այդպես է. առերեսել այն փաստին, որ նույնիսկ եթե բոլոր արտաքին բաները ճիշտ ընթանան, իրական երջանկությունը դեռ կախված կլինի այն մարդկանց անձնավորությունից, որոնց հետ դու պետք է ապրես. և որ դու չես կարող փոխել նրանց անձնավորությունը: Եվ հիմա կարևորը: Երբ դու տեսար սա, դու առաջին անգամ տեսար մի նշույլ, թե ինչպիսին պետք է լինի սա Աստծո համար: Որովհետև, իհարկե, սա (մեկ առումով) հենց այն է, ինչին բախվում է Աստված Ինքը: Նա ապահովել է մարդկանց հարուստ, գեղեցիկ աշխարհով ապրելու համար: Նա տվել է նրանց խելք, որպեսզի ցույց տա, թե ինչպես կարելի է օգտագործել այն, և խիղճ՝ ցույց տալու, թե ինչպես պետք է օգտագործել այն: Նա հոգացել է, որ նրանց կենսաբանական կյանքի համար անհրաժեշտ բաները (սնունդ, խմիչք, հանգիստ, քուն, վարժություն) խիստ հաճելի լինեն նրանց համար: Եվ այս ամենն անելուց հետո, Նա տեսնում է Իր բոլոր ծրագրերը խափանված՝ (ճիշտ այնպես, ինչպես խափանվում են մեր փոքրիկ ծրագրերը) մարդկանց թերության պատճառով: Այն ամենը, ինչ Նա տվել է նրանց երջանիկ լինելու համար, նրանք վերածում են վիճաբանության և նախանձի, շվայտության և դիզելու, և հիմարությունների առիթների:

Դու կարող ես ասել, որ ամեն ինչ շատ տարբեր է Աստծո համար, քանի որ Նա կարող էր, եթե ցանկանար, փոխել մարդկանց անձնավորությունները, իսկ մենք չենք կարող: Սակայն այս տարբերությունն այնքան խոր չէ, որքան այն կարող է թվալ առաջին հայացքից: Աստված օրենք է սահմանել Իրեն համար, որ Նա ուժով չի փոփոխի մարդկանց անձնավորությունները: Նա կարող է և կփոփոխի դրանք, բայց միայն եթե մարդիկ թույլ տան Նրան: Այդկերպ Նա բավականին և իսկապես սահմանափակել է իր գործությունը: Երբեմն մենք խորհում ենք, թե ինչո՞ւ է Նա այդպես արել, կամ նույնիսկ կցանկանայինք, որ Նա այդպես արած չլիներ: Բայց, ըստ երևույթին, Նա կարծում է, որ արժե դա անել: Նա նախընտրում է ունենալ ազատ Էակների աշխարհ՝ իր բոլոր ռիսկերով, քան մարդկանց մի աշխարհ, որոնք անում են ճիշտը, ինչպես մեքենաները, քանի որ այլ բան չեն կարող անել: Որքան շատ մեզ հաջողվի պատկերացնել, թե ինչպիսին կլինեն կատարյալ մեքենայական Էակների աշխարհը, այնքան, կարծում եմ, մենք կտեսնենք Նրա իմաստությունը:

Ես ասացի, որ երբ մենք տեսնում ենք, թե ինչպես են մեր բոլոր ծրագրերը նավարկելվում բոլոր այն մարդկանց անձնավորություններին, որոնց հետ մենք պետք է գործ ունենանք, մենք «մեկ առումով» տեսնում ենք, թե

Ի՞նչ պիտի պետք է լինի ամեն ինչ Աստծո համար: Բայց միայն մեկ առումով.
 կան երկու առումներ, որով Աստծո տեսակետը պիտի որ շատ տարբեր լինի
 մեր տեսակետից: Առաջին հերթին, Նա տեսնում է (ինչպես դու), թե ինչպես են
 քո տան կամ քո աշխատավայրի բոլոր մարդիկ տարբեր աստիճանի
 տարօրինակ կամ դժվարահաճ. բայց երբ Նա նայում է այդ տան, գործարանի
 կամ գրասենյակի մեջ, Նա տեսնում է նույն տեսակի ևս մեկ մարդու, որին դու
 երբեք չես տեսնում: Ես նկատի ունեմ, իհարկե, ինքդ քեզ: Դա իմաստության
 հաջորդ մեծ քայլն է՝ գիտակցել, որ դու նույնպես հենց այդպիսի մարդ ես:
 Դու նույնպես ունես մի աղետալի արատ քո անձնավորության մեջ:
 Ուրիշների բոլոր հույսերն ու ծրագրերը կրկին և կրկին նավարկվել են քո
 անձնավորությանը, ինչպես որ քո հույսերն ու ծրագրերը նավարկվել են
 նրանց անձնավորությանը: Անիմաստ է սա շրջանցել ինչ-որ անորոշ,
 քնդհանուր խոստովանությամբ, ինչպիսին է. «Իհարկե, ես գիտեմ, որ ես
 ունեմ իմ արատները»: Կարևոր է գիտակցել, որ քո մեջ կա ինչ-որ իսկական
 աղետալի արատ՝ մի բան, որը մյուսներին տալիս է հուսահատության նույն
 զգացումը, որը տալիս է քեզ նրանց արատները: Եվ դա գրեթե անկասկած մի
 բան է, որի մասին դու չգիտես՝ օրինակ այն, ինչ գովազդներն անվանում են
 «հալիտոզ», որը բոլորը նկատում են, բացի այն մարդուց, որն ունի դա: Բայց
 ինչո՞ւ, ասում ես դու, ուրիշներն ինձ չեն ասում: Հավատա՛ ինձ, նրանք
 շարունակաբար փորձել են քեզ ասել, բայց դու ուղղակի չես կարողացել
 «տանել» այն: Դու ասում ես. «Ես քնդունում եմ, որ գրգռվեցի անցած գիշեր»:
 Սակայն ուրիշները գիտեն, որ դու միշտ ես այդպես անում, որ դու
 դուրսագրգիռ մարդ ես: Դու ասում ես. «Ես քնդունում եմ, որ ես չափից դուրս
 շատ խմեցի անցած շաբաթ օրը»: Բայց ուրիշները գիտեն, որ դու սովորական
 հարբեցող ես:

Դա ձևերից մեկն է, որով Աստծո տեսակետը պիտի տարբերվի իմից: Նա
 տեսնում է բոլոր անձնավորություններին. ես տեսնում եմ բոլորինը, բացի իմ
 սեփականից: Բայց երկրորդ տարբերությունը սա է: Նա սիրում է մարդկանց՝
 ի հեճուկս նրանց արատների: Նա շարունակում է սիրել: Նա չի դադարում:
 Մի՛ ասա. «Նրան ի՞նչ: Նա ստիպված չէ ապրել նրանց հետ»: Նա ստիպված է:
 Նա նրանց ներսում է, ինչպես որ դրսում է: Նա շատ ավելի մտերմորեն,
 սերտորեն և անքնդհատորեն է նրանց հետ, քան մենք երբևէ կարող ենք
 լինել: Ամեն մի ստոր միտք նրանց (և մեր) մտքում, ատելության, նախանձի,
 ամբարտավանության, ագահության և ինքնահավանության ամեն մի պահ,
 բախվում է Նրա համբերատար և կարոտալի սիրուն, և վշտացնում է Նրա
 հոգին ավելին, քան այն վշտացնում է մերը:

Որքան շատ կարողանանք քնդօրինակել Աստծուն այս երկու առումներով,
 այնքան ավելի շատ առաջ կգնանք: Մենք պետք է ավելի շատ սիրենք X-ին. և
 մենք պետք է սովորենք տեսնել ինքներս մեզ որպես ճիշտ նույն տեսակի
 մարդ: Որոշ մարդիկ ասում են, որ հիվանդություն է միշտ մտածել սեփական
 արատների մասին: Դա շատ լավ կլիներ, եթե մեզնից մեծ մասը կարողանար
 դադարել մտածելու իր արատների մասին՝ չսկսելով մտածել այլ մարդկանց

արատների մասին: Որովհետև, ցավոք, մենք հաճույք ենք ստանում ուրիշների արատների մասին մտածելուց. և «հիվանդ» բառի բուն իմաստով, դա աշխարհի ամենահիվանդ հաճույքն է:

Մենք չենք սիրում բաժնեհանելը, որը մեզ պարտադրվում է, բայց ես առաջարկում եմ բաժնեհանելու մեկ ձև, որը մենք պետք է պարտադրենք ինքներս մեզ: Չերժ մնալ այլ մարդկանց արատների մասին քնդհանրապես մտածելուց, բացառապես եթե ձեր պարտականությունները որպես ուսուցիչ կամ ծնող անհրաժեշտ են դարձնում ձեզ համար մտածել դրանց մասին: Ամեն անգամ, երբ այդ մտքերն անտեղի ծագում են մեր գլխում, ինչո՞ւ պարզապես չիրել դրանք մի կողմ: Եվ դրա փոխարեն մտածել սեփական արատների մասին: Քանի որ այնտեղ, Աստծո օգնությամբ, կարելի է ինչ-որ բան անել: Չեր տան կամ աշխատանքի բոլոր անսովոր մարդկանցից կա միայն մեկը, որին դուք կարող եք բարելավել իսկապես շատ: Դա այն պրակտիկ մեկնակետն է, որից պետք է սկսել: Եվ իսկապես, լավ կանենք սկսել: Այդ աշխատանքը մի օր պիտի արվի, և ամեն օր, որ մենք հետաձգում ենք այն, ավելի է դժվարացնելու այն սկսել:

Որովհետև, ի վերջո, ո՞րն է այլընտրանքը: Դու պարզորեն տեսնում ես, որ ոչինչ, նույնիսկ Աստված իր ողջ գործությամբ, չի կարող X-ին իսկապես երջանիկ դարձնել, քանի դեռ X-ը մնում է նախանձ, եսակենտրոն և ոխակալ: Համոզված եղիր, որ կա ինչ-որ մի բան քո ներսում, որը, եթե այն չփոխվի, ապա Աստծո գործության համար անհնարին կդարձնի կանխելու քո հավերժ թշվառ լինելը: Մինչ այդ ինչ-որ բանը մնում է, քեզ համար դրախտ չի կարող լինել, ինչպես որ չի կարող լինել քացր հոտեր՝ մրսածության պատճառով քիթը փակ մարդու համար, և երաժշտություն՝ խուլ մարդու համար: Խոսքը Աստծո կողմից դժոխք «ուղարկվելը» չէ: Յուրաքանչյուրիս մեջ կա մի աճող բան, որն ինքնին կլինի դժոխք, եթե այն չկտրվի բողբոջից: Խնդիրը լուրջ է. եկեք անհապաղ դնենք ինքներս մեզ Նրա ձեռքերում՝ հենց այսօր, հենց այս ժամին:

Քլայվ Սթեյվիս Լյուիս, 1948

Թարգմանությունը՝ Արարատ Հարությունյանի, 2024թ.
araratharuty@gmail.com